# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

16 մայիսի 2019թվականի N 66-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՀԱՑԱԾ ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N21-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ **Գոհարիկ Ռազմիկի Միրզոյանին** տրամադրել 100 000ՀՀ դրամ դրամական օգնություն հոր՝ **Ռազմիկ Մելիքի Կարապետյանի** մահվան համար /մահացել է 05.05.2019թ., հիմք մահվան վկայական ԲԱ114288, տրված 08.05.2019թ. Վաղարշապատի ՔԿԱԳ տարածքային բաժնից /:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ.
մայիսի 16

գ.Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

20 մայիսի 2019 թվականի N67-Ա

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը և համաձայն 2019 թվականի մայիսի 18-ին <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ից /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ստացված հողամասի հատակագծի, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման 0,0038 հեկտար հողամասի վրա կառուցված 38քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությանը տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն մարզ Արմավիրի համայնք Մերձավան Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 5:

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի մայիսի 20

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

20 մայիսի 2019 թվականի N68-Ա

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի188-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N731-Ն ու N912-Ն որոշումների դրույթներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, համայնքային նշանակության քաղաքացիական համալիր ծրագրերին և նրա զբաղեցրած հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և համաձայն 2019 թվականի մայիսի 18-ին <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ից /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ստացված հողամասի հատակագծի, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի Երևանյան խճուղու 2-րդ փողոցի թիվ 5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման 0,0038 հեկտար հողամասի վրա ինքնակամ կառուցված 38,0 քառակուսի մետր /արտաքին/ մակերեսով առևտրի սրահը ճանաչել օրինական և համարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի սեփականությունը:

2. Բանավոր առաջարկություն անել ինքնակամ շինությունն իրակացրած անձ Ռադիկ Սերյոժայի Նիկողոսյանին՝ օրինականացված 38,0 քառակուսի մետր /արտաքին/ մակերեսով առևտրի սրահը և 0,0038 հեկտար հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով գնելու համար:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի մայիսի 22

գ. Մերձավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ՈՐՈՇՈՒՄ**

20 մայիսի 2019 թվականի N69-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումների դրույթներով, հաշվի առնելով կառույցն իրականացրած անձին՝Արտավազդ Վասիլի Հովհաննիսյանին, գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքով/ տրամադրելու վերաբերյալ 2019 թվականի մայիսի 20-ին տրված թիվ 1 գրավոր առաջարկությունը և վերջինիս կողմից տրված համաձայնությունը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 04-065-0062-0092, սեփականության իրավունքի վկայականN17052019-04-0048 /, հողակադաստրային տարածագնահատման 9-րդ գոտու, Երևանյան խճուղու N15/16 հասցեում կառուցված 123,71 քառակուսի մետր արտաքին մակերեսով շենք- շինությունների / բնակելի տուն՝ 55,26 քառակուսի մետր, ավտոտնակ՝ 50,58 քառակուսի մետր, աստիճանավանդակ՝ 8,5 քառակուսի մետր, պահեստ 9,37 քառակուսի մետր/ պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0,0064 հեկտար հողամասն ուղղակի վաճառքով օտարել այդ շենք-շինություններն ինքնակամ կառուցող Արտավազդ Վասիլի Հովհաննիսյանին:

2. Բնակելի տան վաճառքի վճարը յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 5 100 ՀՀ դրամ է՝55,26 x 5 100 =281 826ՀՀ դրամ:

Ավտոտնակի վաճառքի վճարը յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 1 700 ՀՀ դրամ է՝ 50,58 x 1 700 = 85 986ՀՀ դրամ:

Աստիճանավանդակի վաճառքի վճարը յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 5 100 ՀՀ դրամ է՝ 8,5 x 5 100 = 43 350 ՀՀ դրամ:

Պահեստի վաճառքի վճարը յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 3 400 ՀՀ դրամ է՝ 9,37 x 3 400 = 31 858 ՀՀ դրամ:

Շինությունների պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասն օտարել կադաստրային արժեքով: Մեկ հեկտարի կադաստրային արժեքը 19 140 000 ՀՀ դրամ է՝ 0,0064 x 19 140 000= 122 496 ՀՀ դրամ:

Որոշման ընդունման օրվանից սկսած, շինությունների և հողամասի օրինակացման համար հաշվարկված վճարները, 60-օրյա ժամկետում պետք է վճարվի՝ 443 020 ՀՀ դրամը Մերձավան համայնքի վարչական եկամուտների 900325175157 հաշվեհամարին, իսկ 122 496 ՀՀ դրամը՝ համայնքի ֆոնդային եկամուտների 900325175132 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

Վճարման ենթակա է՝ ընդամենը 565 516ՀՀ դրամ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի մայիսի 20

համայնք Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մայիսի 2019թվականի N 70-Ա

### ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 20-ի N24-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բյուջեից հատկացնել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ տարեվերջյան ավարտական միջոցառում կազմակերպելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Լ Ե Վ Ո Ն Գ Ր Ի Գ Ո Ր Յ Ա Ն**

2019 թվականի մայիսի 20
համայնք Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մայիսի 2019 թվականի N71-Ն

## *ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N65-Ն որոշման հավելվածի 5-րդ կետը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N65-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումը՝ 09 բաժնի 2-րդ խմբի 2-րդ դասի 4269 հոդվածով նախատեսված գումարից 200 000 ՀՀ դրամն ուղղել 09 բաժնի 2-րդ խմբի 2-րդ դասի 4239 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի մայիսի 20

ի. Մերձավան

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի << ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N71-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N65-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Մերձավան համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 20-ի <<Համայնքի 2019 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին>> N71-ն որոշման ընդունումը պայմանավորված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսդրությունների պահանջներով՝ բյուջեի լրացուցիչ եկամուտների ու ծախսերի ֆինանսավորման անհրաժեշտություններից ելնելով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am


# ՈՐՈՇՈՒՄ

24 մայիսի 2019 թվականի N72-Ա

## *ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Մարինե Եղիազարյանի 2019 թվականի մայիսի 23-ի դիմումը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Մերձավան համայնքի բնակիչ Մարինե Եղիազարյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) իրեն սեփականության իրավունքով պատկանող 2-րդ փողոց թիվ 73 և75 հասցեներում գտնվող տնամերձ հողամասերում ձեղնահարկով բնակելի տուն կառուցելու համար:

2. Մարինե Եղիազարյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի մայիսի 24

հ. Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

30 մայիսի 2019 թվականի N73-Ա

## *ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Մերձավանի համայնքապետարանի, ի դեմս Լևոն Գրիգորյանի կողմից ներկայացրած 2019 թվականի մայիսի 29-ի դիմումը,

**որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի մշակույթի տան նկուղային հարկում հանդիսությունների սրահի վերանորոգման լրացուցիչ աշխատանքների շինարարական ակտը ձևակերպել և տրամադրել շահագործման թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի մայիսի 30

ք. Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

30 մայիսի 2019 թվականի N74-Ա

## *ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Մարինե Եղիազարյանի 2019 թվականի մայիսի 30-ի դիմումը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ Մարինե Եղիազարյանին տալ շինարարության թույլտվություն իրեն սեփականության իրավունքով պատկանող 2-րդ փողոց թիվ 73 և 75 հասցեում գտնվող տնամերձ հողամասերում ձեղնահարկով բնակելի տուն կառուցելու համար:

2.Սահմանված կարգով իրականացնել տեղական տուրքի գանձումը:

3.Մարինե Եղիազարյանը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Մերձավան համայնքի ղեկավարին ներկայացնել N2-5 ձևի տեղեկանք:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի մայիսի 30

հ. Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

30 մայիսի 2019 թվականի N75-Ա

### *ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանի 2019 թվականի մայիսի 30-ի դիմումը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգման համար տալ շինարարության թույլտվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի մայիսի 30

ի. Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2019 թվականի N76-Ա

## *ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 13-ի N41-Ա որոշումը , **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ Էդգար Արամայիսի Հակոբյանին տրամադրել 50 000 ՀՀ դրամ դրամական օգնություն երեխայի՝ Ալեքս Էդգարի Հակոբյանի ծննդյան կապակցությամբ /ծնված 2019 թվականի ապրիլի 29-ին, հիմք ծննդյան վկայական ԲԱ115039, տրված Վաղարշապատ ՔԿԱԳ տարածքային բաժնից՝ 2019 թվականի մայիսի 10-ին/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի մայիսի 31

ի. Մերձավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2019 թվականի N77-Ա

## *ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանի 2019 թվականի մայիսի 29-ի հայտը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ շենքի քաղդատե հատակները ե/բ հատակով փոխարինելու համար:

2.Նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի մայիսի 31

հ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

14 մայիսի 2019 թվականի N17-Ա

### *ԱՐԵՎՀԱՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի տեղակալ Արևհատ Սարգսյանի 2019 թվականի մայիսի 14-ի դիմումը, **կարգադրում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի տեղակալ Արևհատ Սարգսյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2019 թվականի մայիսի 15-ից մինչև հունիսի 13-ը ներառյալ՝ 30 օր տևողությամբ:

2.Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի հունիսի 14-ին:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի մայիսի 14

համայնք Մերձավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

15 մայիսի 2019 թվականի N18-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Գնումների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի երրորդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի յոթերորդ մասի դրույթներով , **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքները կատարելու համար պատասխանատու ստորաբաժանում սահմանել համայնքապետարանին, իսկ ստորաբաժանման պատասխանատու համարել համայնքապետարանի առաջատար մասնագետ՝ Աշոտ Գրիգորյանին:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների գնումների համակարգող սահմանել Ցոլիկ Ռուդիկի Առաքելյանին:

3. Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացները կազմակերպել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի մայիսի 15

հ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

15 մայիսի 2019թվականի N 19-Ա

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 13-րդ կետի, 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով **կարգադրում եմ.**

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին՝ (Ա. Գրիգորյանին) ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի փողոցների ասֆալտբետոնե ծածկույթի, լուսավորության ցանցի, շենքերի և շինությունների առկա վիճակը, ընթացիկ վերանորոգման աշխատանքների անհրաժեշտությունը, գնահատել իրավիճակը, կատարվելիք աշխատանքների վերաբերյալ կազմել թերությունների ակտ և զեկուցել համայնքի ղեկավարին:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ.
մայիսի 15

ի.Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ղեկավարի
2019 թվականի մայիսի 15-ի
N 19-Ա կարգադրության

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ա.Գրիգորյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ.

**Անդամներ՝**

Հ.Գևորգյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակից.

Վ. Խուրշուդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ աշխատակից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
16 մայիսի 2019 թվականի N20-Ա
***ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասի, <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի երկրորդ մասի 6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով քաղ. Իրինա Գագիկի Ստեփանյանի դիմումը, **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Մերձավան համայնքի բնակիչ Իրինա Գագիկի Ստեփանյանի գույքահարկի մասով առաջացած 15 637 ՀՀ դրամ գերավճարը վերադարձնել և այն փոխանցել 2050075967657002 հաշվեհամարին:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019թվականի մայիսի 16
հ. Մերձավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

16 մայիսի 2019 թվականի N21-Ա

## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ մասի դրույթներով, **կարգադրում եմ.**

1.Կազմավորել գնահատող հանձնաժողով **ՀՀԱՄՄՀԳՀԱՇՁԲ-19/06** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի և հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Ցոլիկ Ռուդիկի Առաքելյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի մայիսի 16
ի. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ղեկավարի
2019 թվականի մայիսի 16-ի
N 21-Ա կարգադրության

## ՀՀԱՄՄՀԳՀԱՇՁԲ-19/06 ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Ս.Դավթյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ:

Անդամներ՝

Ս.Ավետիսյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի գլխավոր մասնագետ:

Լ. Սիմոնյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

20 մայիսի 2019 թվականի N22-Ա

## *ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ԹԻՎ 5-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2017թվականի փետրվարի 1-ի թիվ 5-Ա <<Հանձնաժողով ստեղծելու մասին>> կարգադրության հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի մայիսի 20
ի. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ղեկավարի
2019 թվականի մայիսի 20-ի
N22-Ա կարգադրության

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Էմմա Կարապետյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ ուսմասվար

**Անդամներ՝**

Աշոտ Գրիգորյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Սերյոժա Մկրտչյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Մերձավանի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ տնօրեն

Գայանե Սարգսյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ տնօրեն

Վեմիր Խուրշուդյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ աշխատակից

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

23 մայիսի 2019 թվականի N23-Ա

*ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով,

**կարգադրում եմ.**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ (Ա:Գրիգորյանին) իրականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքի մշակույթի տան նկուղային հարկում հանդիսությունների սրահի վերանորոգման լրացուցիչ աշխատանքների ավարտի փաստագրումը և կազմել ավարտված շինարարական օբյեկտի ընդունման ակտ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թվականի մայիսի 23
ի. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ղեկավարի
2019 թվականի մայիսի 23-ի
N 23-Ա կարգադրության

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ա.Գրիգորյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

**Հանձնաժողովի անդամներ՝**

Հ. Գևորգյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից

Վ. Խուրշուդյան — <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ աշխատակից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ